Հավելված 1

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-65-Ո-165
2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ**

2021թ. օգոստոսի 30
ք. Երևան

Հավելված 1
Բարձրագույն դատական խորհրդի
2021 թվականի օգոստոսի 30-ի
թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշման

ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գործի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ սահմանելու նպատակն է ապահովել դատական գործերի ողջամիտ ժամկետում քննությունը և լուծումը, դատարանների և դատավորների հաշվետվողականությունը, գործերի քննության տևողության կանխատեսելիությունը:

2. Սույն որոշումը չի վերաբերում այն գործերի քննության ժամկետներին, որոնք նախատեսված են դատավարական օրենքներով:

3. Գործի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ սահմանելիս՝ հիմք է ընդունվել գործի բարդության մակարդակը: Գործն ըստ բարդության մակարդակի լինում է՝ պարզ, միջին բարդության, բարդ և առանձնակի բարդության:

Գործի բարդության մակարդակը որոշվում է գործի իրավական և փաստական բարդության չափանիշներով:

Իրավական բարդության չափանիշը որոշվում է կիրառման ենթակա իրավունքի նորմերի և ինստիտուտների առանձնահատկություններով:

Գործն ըստ իրավական բարդության չափանիշի կարող է ունենալ հետևյալ գործակիցները՝

ա) թեթև աստիճանի բարդություն՝ 0,25 գործակից,

բ) միջին աստիճանի բարդություն՝ 0,50 գործակից,

գ) բարձր աստիճանի բարդություն՝ 0,75 գործակից,

դ) առավել բարձր աստիճանի բարդություն՝ 1.0 գործակից:

Գործի փաստական բարդության չափանիշը որոշվում է դատավարական անհրաժեշտ գործողություններ կատարելու ծավալով և այն հանգամանքներով, որոնք անխուսափելիորեն երկարեցնում են գործի քննության տևողությունը:

Գործն ըստ փաստական բարդության չափանիշի կարող է ունենալ հետևյալ գործակիցները՝

ա) թեթև աստիճանի աշխատատարություն՝ 0,25 գործակից,

բ) միջին աստիճանի աշխատատարություն՝ 0,50 գործակից,

գ) բարձր աստիճանի աշխատատարություն՝ 0,75 գործակից,

դ) առավել բարձր աստիճանի աշխատատարություն՝ 1.0 գործակից:

Գործերի փաստական բարդության չափանիշների գործակիցների հանրագումարը, գումարվելով իրավական բարդության չափանիշի գործակցին, ձևավորում է գործի բարդության մակարդակը:

4. «Դատական համակարգ» ծրագրում դատական գործին տրվում է դատական գործերի դասակարգմանը համապատասխան վիճակագրական տող, որը հնարավորություն է ընձեռում՝ անհատականացնելու յուրաքանչյուր դատական գործի քննության ուղենիշային ժամկետը:

Գործի քննության ընթացքում գործի բարդության մակարդակի փոփոխության դեպքում դատարանի աշխատակազմը այդ մասին կատարում է համապատասխան նշում «Դատական համակարգ» ծրագրում:

5. Սահմանված ուղենիշային ժամկետներում ներառված չեն գործի վարույթի կասեցման ժամանակահատվածը, հաշտության և հաշտարարության համար դատարանի կողմից նշանակված ժամկետները, փորձաքննության ժամանակահատվածը, ինչպես նաև գործի վարույթի ընթացքում ծագած անհաղթահարելի իրավիճակով պայմանավորված դատավարական գործողություններ չիրականացնելու ժամանակահատվածները:

6. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում դատական քննության ուղենիշային ժամկետները ներկայացված են սույն կարգի I գլխում, որոնցից հնարավոր շեղումը չի կարող գերազանցել յուրաքանչյուր դատավորի վարույթում քննված և ավարտված գործերի ընդհանուր քանակի տասը տոկոսը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում դատական քննության ուղենիշային ժամկետը ինն ամիս է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում դատական քննության ուղենիշային ժամկետը երեք ամիս է:

ՀՀ վճռաբեկ դատարանում դատական քննության ուղենիշային ժամկետը 15 ամիս է:

7. Սույն որոշմամբ սահմանված գործերի քննության ուղենիշային ժամկետների պահպանման գործընթացը ենթակա է մշտադիտարկման, որի արդյունքներով պայմանավորված՝ դրանք կարող են վերանայվել:

8. Սույն որոշմամբ սահմանված ուղենիշային ժամկետների հաշվարկի սկիզբ է համարվում դատարանի կողմից հայցադիմումը/դիմումը, քրեական գործը, վերաքննիչ և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պահը:

9. Սույն որոշմամբ սահմանված ուղենիշային ժամկետների հաշվարկի հիմք է հանդիսանում տվյալ տարվա ընթացքում դատարանի կողմից վարույթ ընդունված գործերի ընդհանուր թիվը:

10. Գործերի միջին ուղենիշային ժամկետների սահմանման համար հիմք են ընդունվել ABA ժամանակային ստանդարտները: Հարյուր տոկոսին

համապատասխանում է տվյալ տարվա ընթացքում դատարանի վարույթում գտնվող կոնկրետ բարդության մակարդակի բոլոր գործերը: Հարյուր տոկոսին համապատասխան գործերի ընդհանուր թվից առանձնացվում են խմբեր, որոնցից յուրաքանչյուրի համար սահմանվում է առանձին ժամկետ: Գործերի յուրաքանչյուր խմբի փաստացի տոկոսը հաշվելու համար անհրաժեշտ է այդ տոկոսից հանել իրեն նախորդող ավելի փոքր տոկոսային չափը:

11. Սույն որոշմամբ սահմանված ուղենիշային ժամկետները տարածվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վարույթ ընդունված գործերի վրա:

ԳԼՈՒԽ Ի. ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ

1. Քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր

Քաղաքացիական գործերով փաստական բարդության չափանիշ

Քաղաքացիական գործերով փաստական բարդության չափանիշ	**Փաստական բարդության չափանիշի գործակից**
Հայերենին չտիրապետող դատավարությանը մասնակցող անձանց առկայությունը	0,25
Գործի քննության ընթացքում ինքնաբացարկի երկու և ավելի միջնորդությունների ներկայացման դեպքերը	0,25
Դատավարական ժամկետները երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունների քննարկման դեպքերը	0,25
Դատավարական իրավահաջորդության դեպքերը	0,5
Փորձաքննության նշանակումը	0,5
Դատական հանձնարարության անհրաժեշտությունը	0,75
Միջանկյալ դատական ակտի բողոքարկումը	0,75 (յուրաքանչյուր բողոքարկման համար)
Հայցվորների (դիմողների) և/կամ պատասխանողների քանակը, այդ թվում՝ գործի քննության ընթացքում ներգրավվելու դեպքերը	1 (յուրաքանչյուր կողմի համար)
Պահանջների քանակը (երկու և ավելի), այդ թվում՝ գործի քննության ընթացքում լրացվող պահանջները	1 (յուրաքանչյուր պահանջի համար)
Դատավարության մյուս մասնակիցների քանակը, այդ թվում՝ գործի քննության ընթացքում ներգրավվելու դեպքերը	1 (յուրաքանչյուր մասնակցի համար)
Հակընդդեմ հայցի առկայությունը	1

Օտարերկրյա կամ միջազգային իրավունքի կիրառման անհրաժեշտությունը	1
Մի քանի դատական գործերի մեկ վարույթում միացնելու դեպքերը	1

Քաղաքացիական գործերով իրավական բարդության չափանիշ

Գործի տեսակ	**Իրավական բարդության չափանիշի գործակից**	**Վիճ. տող**
Ընտանեկան իրավահարաբերությունների հետ կապված վեճ	0,25	1.1
Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը	0,25	1.2
Շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ գործերը	0,25	1.3
Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) գործերը	0,25	1.4
Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու վերաբերյալ գործերը	0,25	1.5
Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու գործերը	0,25	1.6
Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու վերաբերյալ գործերը (կոչի վարույթ)	0,25	1.7
Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի վճռի վերանայման վերաբերյալ գործերը	0,25	1.8
Ժառանգական իրավահարաբերությունների հետ կապված վեճ	0,5	2.1
Ապահովագրական իրավահարաբերությունների հետ կապված վեճ	0,5	2.2
Սեփականության իրավունքի ծագման, փոփոխման, դադարեցման և պաշտպանության իրավահարաբերությունների հետ կապված վեճ	0,5	2.3
Հողային իրավահարաբերությունների վերաբերյալ վեճ	0,5	2.4
Գործարքներից ծագող վեճ	0,75	3.1

Առանձին պայմանագրերից ծագող վեճ	0,75	3.2
Ոչ գույքային վնասների հետ կապված վեճ	0,75	3.3
Գույքային վեճ	0,75	3.4
Պայմանագրային վեճ	0,75	3.5
Կորպորատիվ վեճեր	0,75	3.6
Խմբային հայցի հիման վրա քննվող վարույթ	0,75	3.7
Երեխայի որդեգրման վերաբերյալ գործերը	0,75	3.8
Միակողմանի գործարքներից ծագող պարտավորությունների վերաբերյալ վեճ	1.0	4.1
Մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ վեճ	1.0	4.2
Վճարահաշվարկային գործերի վերաբերյալ վեճ	1.0	4.3
Գույքի հավատարմագրային կառավարման վեճ	1.0	4.4
Ֆոնդի կառավարման վեճ	1.0	4.5
Համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության վեճ	1.0	4.6
Ֆակտորինգի հետ կապված վեճ	1.0	4.7
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և անվճարունակ բանկի, վարկային կազմակերպության, ներդրումային ընկերության, ներդրումային ֆոնդի կառավարչի և ապահովագրական ընկերության ժամանակավոր ադմինիստրացիայի որոշումների բողոքարկում	1.0	4.8

Քաղաքացիական գործերի բարդության մակարդակը հաշվարկվում է փաստական և իրավական բարդության չափանիշների գործակիցների գումարման միջոցով: Գործն ըստ բարդության մակարդակի լինում է՝

ա/ պարզ – 2,25-4,5 գործակցի դեպքում,
բ/ միջին բարդության – 4,5-8 գործակցի դեպքում,
գ/ բարդ – 8-10 գործակցի դեպքում,
դ/ առանձնակի բարդ – 10 և ավելի գործակցի դեպքում:

Քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության պարզ մակարդակ ունեցող դատական գործերի՝
70 տոկոսը ենթակա է քննության 1 ամսվա ընթացքում,
90 տոկոսը ենթակա է քննության 2 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 3 ամսվա ընթացքում:

Քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության միջին մակարդակ ունեցող դատական գործերի՝
70 տոկոսը ենթակա է քննության 4 ամսվա ընթացքում,
90 տոկոսը ենթակա է քննության 5 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 6 ամսվա ընթացքում:

Քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝

70 տոկոսը ենթակա է քննության 8 ամսվա ընթացքում,

90 տոկոսը ենթակա է քննության 10 ամսվա ընթացքում,

100 տոկոսը ենթակա է քննության 12 ամսվա ընթացքում:

Քաղաքացիական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության առանձնակի բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝

70 տոկոսը ենթակա է քննության 13 ամսվա ընթացքում,

90 տոկոսը ենթակա է քննության 15 ամսվա ընթացքում,

98 տոկոսը ենթակա է քննության 18 ամսվա ընթացքում:

2. Սնանկության իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր

Սնանկության գործերով փաստական բարդության չափանիշ

Սնանկության գործերով փաստական բարդության չափանիշ	**Փաստական բարդության չափանիշի գործակից**
Հայերենին չտիրապետող դատավարությանը մասնակցող անձանց առկայությունը	0,25
Գործի քննության ընթացքում ինքնաբացարկի երկու և ավելի միջնորդությունների ներկայացման դեպքերը	0,25
Փորձաքննության նշանակումը	0,5
Դատավարական ժամկետները երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունների քննարկման դեպքերը	1
Պարտատերերի քանակը	1 (յուրաքանչյուր պարտատիրոջ համար)
Դատավարության մյուս մասնակիցների քանակը, այդ թվում՝ գործի քննության ընթացքում ներգրավվելու դեպքերը	1 (յուրաքանչյուր մասնակցի համար)
Օտարերկրյա կամ միջազգային իրավունքի կիրառման անհրաժեշտությունը	1

Սնանկության գործերով իրավական բարդության չափանիշ՝

Սնանկության իրավահարաբերության վերաբերյալ դատական գործեր	**Իրավական բարդության չափանիշի**	**Վիճ. տող**

	գործակից	
1. Իրավաբանական անձի սնանկության վերաբերյալ	0,50	1
2. Անհատ ձեռներեցի սնանկության վերաբերյալ	0,50	1.2
3. Ֆիզիկական անձի սնանկության վերաբերյալ	0,50	1.3

Սնանկության գործերի բարդության մակարդակը հաշվարկվում է փաստական և իրավական բարդության չափանիշների գործակիցների գումարման միջոցով: Գործն ըստ բարդության մակարդակի լինում է՝

ա/ պարզ – 2,5-5 գործակցի դեպքում,
բ/ միջին բարդության – 5-7 գործակցի դեպքում,
գ/ բարդ – 7-10 գործակցի դեպքում,
դ/ առանձնակի բարդ – 10 և ավելի գործակցի դեպքում:

Սնանկության իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության պարզ մակարդակ ունեցող դատական գործերի՝
90 տոկոսը ենթակա է քննության 3 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 4 ամսվա ընթացքում:

Սնանկության իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության միջին մակարդակ ունեցող դատական գործերի՝
70 տոկոսը ենթակա է քննության 5 ամսվա ընթացքում,
90 տոկոսը ենթակա է քննության 6 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 7 ամսվա ընթացքում:

Սնանկության իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝
70 տոկոսը ենթակա է քննության 8 ամսվա ընթացքում,
90 տոկոսը ենթակա է քննության 10 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 12 ամսվա ընթացքում:

Սնանկության իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության առանձնակի բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝
70 տոկոսը ենթակա է քննության 13 ամսվա ընթացքում,
90 տոկոսը ենթակա է քննության 15 ամսվա ընթացքում,
98 տոկոսը ենթակա է քննության 18 ամսվա ընթացքում:

3. Վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր

Վարչական գործերով փաստական բարդության չափանիշ

Վարչական գործերով փաստական բարդության չափանիշ	**Փաստական բարդության չափանիշի գործակից**
Հայերենին չտիրապետող դատավարությանը մասնակցող անձանց առկայությունը	0,25
Գործի քննության ընթացքում ինքնաբացարկի միջնորդությունների ներկայացման դեպքերը	0,25 (յուրաքանչյուր դեպքի համար)
Փորձաքննության նշանակումը	0,25
Դատական հանձնարարության անհրաժեշտությունը	0,25
Դատավարական իրավահաջորդության դեպքերը	0,5
Միջանկյալ դատական ակտի բողոքարկումը	0,75 (յուրաքանչյուր բողոքարկման համար)
Հայցվորների (դիմողների) և/կամ պատասխանողների քանակը, այդ թվում՝ գործի քննության ընթացքում ներգրավվելու դեպքերը	1 (յուրաքանչյուր կողմի համար)
Պահանջների քանակը, այդ թվում՝ գործի քննության ընթացքում լրացվող պահանջները	1 (յուրաքանչյուր պահանջի համար)
Դատավարության մյուս մասնակիցների քանակը, այդ թվում՝ գործի քննության ընթացքում ներգրավվելու դեպքերը	1 (յուրաքանչյուր մասնակցի համար)
Հակընդդեմ հայցի առկայությունը	1
Օտարերկրյա կամ միջազգային իրավունքի կիրառման անհրաժեշտությունը	1
Մի քանի դատական գործերի մեկ վարույթում միացնելու դեպքերը	1

Վարչական գործերով իրավական բարդության չափանիշ՝

Գործի տեսակ	**Իրավական բարդության չափանիշի գործակից**	**Վիճ. տող**
Ճանապարհային ոստիկանության կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված վարչական ակտերի վիճարկման գործերը և համայնքներում վճարովի ավտոկայանատեղերի համար	0,25	1.1

օրենքով սահմանված տեղական վճարը չվճարելու կամ առանց հաշվառման համարանիշի, առնվազն մեկ նիշը փակված վիճակում կայանելու վերաբերյալ ակտերը վիճարկելու գործերը		
Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործ	0,25	1.2
Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործ	0,5	1.3
Նոտարի գործողությունների իրավաչափության վերաբերյալ գործ	0,25	1.4
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացվելու որոշման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործ	0,25	1.5
Հասարակական կազմակերպության ներկայացրած հայցով գործ	0,5	2.1
Գործողությունների կատարման հայցով գործ	0,75	2.4
Պարտավորեցման հայցով գործ	1.0	3.1
Ճանաչման հայցով գործ	1.0	3.2
Վիճարկման հայցով գործ	1.0	3.3

Վարչական գործերի բարդության մակարդակը հաշվարկվում է փաստական և իրավական բարդության չափանիշների գործակիցների գումարման միջոցով: Գործն ըստ բարդության մակարդակի լինում է՝

ա/ պարզ – 2,25-4 գործակցի դեպքում,
բ/ միջին բարդության – 4-6 գործակցի դեպքում,
գ/ բարդ – 6-10 գործակցի դեպքում,
դ/ առանձնակի բարդ – 10 և ավելի գործակցի դեպքում:

Վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության պարզ մակարդակ ունեցող դատական գործերի՝

90 տոկոսը ենթակա է քննության 3 ամսվա ընթացքում,

100 տոկոսը ենթակա է քննության 4 ամսվա ընթացքում:

Վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության միջին մակարդակ ունեցող դատական գործերի՝

90 տոկոսը ենթակա է քննության 5 ամսվա ընթացքում,

100 տոկոսը ենթակա է քննության 6 ամսվա ընթացքում:

Վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝

70 տոկոսը ենթակա է քննության 8 ամսվա ընթացքում,

90 տոկոսը ենթակա է քննության 10 ամսվա ընթացքում,

100 տոկոսը ենթակա է քննության 12 ամսվա ընթացքում:

Վարչական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության առանձնակի բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝

70 տոկոսը ենթակա է քննության 13 ամսվա ընթացքում,

90 տոկոսը ենթակա է քննության 15 ամսվա ընթացքում,

98 տոկոսը ենթակա է քննության 18 ամսվա ընթացքում:

4. Քրեական իրավահարաբերությունների վերաբերյալ դատական գործեր

Քրեական գործերով փաստական բարդության չափանիշ

Քրեական գործերով փաստական բարդության չափանիշ	**Փաստական բարդության չափանիշի գործակից**
Ամբաստանյալների շահերի միջև հակասությունների առկայությունը	0,25
Դատավարության այլ մասնակիցների քանակը	0,25 (յուրաքանչյուր մասնակցի համար)
Ամբաստանյալների քանակը	0,5 (յուրաքանչյուր ամբաստանյալի համար)
Մեղսագրվող արարքների քանակը	0,5 (յուրաքանչյուր արարքի համար)
Պաշտպանի կամ պաշտպանների փոխվելու դեպքերը	0,75
Միջանկյալ դատական ակտի բողոքարկումը	0,75 (յուրաքանչյուր բողոքարկման համար)
Փորձաքննության նշանակումը	1
Դատական հանձնարարության անհրաժեշտությունը	1

Հայերենին չտիրապետող դատավարությանը մասնակցող անձանց առկայությունը	1
Մի քանի դատական գործերի մեկ վարույթում միացնելու դեպքերը	1
Նույն ամբաստանյալի վերաբերյալ տարբերի դատավորների մոտ գործերի առկայությունը	1
Դատական վարույթի հասարակական հնչեղությունը կամ լրատվամիջոցների հետաքրքրությունը՝ հաշվի առնելով դրանց ազդեցությունը կազմակերպչական հարցերի վրա	1

Քրեական գործերով իրավական բարդության չափանիշի գործակից

Գործի տեսակ	Իրավական բարդության չափանիշի գործակից	Վիճ. Տող
ՀՀ քրեական օրենսգրքի 130.1, 143-148-րդ, 155-րդ, 156-րդ, 158-163-րդ, 169-րդ, 169.1, 170-րդ, 171-րդ, 173-րդ, 174-րդ, 184.1, 185-րդ, 186-րդ, 186.1, 212-րդ, 215.2, 216.1, 243-րդ, 243.1, 244-րդ, 258.2-260-րդ, 264-րդ, 265-րդ, 277-280-րդ, 281-298-րդ, 317-րդ, 323-րդ, 330-րդ, 331-րդ, 342-րդ, 346-րդ, 374-րդ հոդվածներ	0,25	1.1
ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ, 117-124.1, 128-131-րդ, 134-րդ, 137-րդ, 149-154.10, 157-րդ, 164-167.1, 171.1, 172-րդ, 180-րդ, 183-րդ, 184-րդ, 214-րդ, 216-րդ, 225.1-240-րդ, 245-257-րդ, 263-րդ, 268-րդ, 269.1-274-րդ, 276-րդ, 280.1, 280.2, 307.1-307.2, 314.1-314.3, 315-315.2, 319-322-րդ, 324-329-րդ, 332-332.5, 334.1, 335-րդ, 342.1-345.1, 347-355-րդ, 361-362-րդ, 364-364.2, 369-372-րդ, 376-րդ հոդվածներ	0,5	1.2
ՀՀ քրեական օրենսգրքի 108-112-րդ, 114-116-րդ, 125-րդ, 125.1, 127-127.2, 132-133-րդ, 138-142-րդ, 168-րդ, 169.2, 176-րդ, 177-րդ, 181-րդ,	0,75	1.3

182-րդ, 187-189.1, 190.1-209-րդ, 213-րդ, 215.1, 223.1-223.4, 241-րդ, 242-րդ, 261-րդ, 262-րդ, 267-րդ, 269-րդ, 308-314-րդ, 316-րդ, 329.1, 333-րդ, 334-րդ, 336-341.2, 356-360-րդ, 363-րդ, 365-368.1, 377-397.1 հոդվածներ		
ՀՀ քրեական օրենսգրքի 104-107-րդ, 175-րդ, 178-րդ, 179-րդ, 190-րդ, 217-223-րդ, 224-րդ, 225-րդ, 258-րդ, 266-րդ, 267.1, 275-րդ, 299-307-րդ, 360.1, 360.2, 373-րդ, 375-րդ հոդվածներ	1.0	1.4

Քրեական գործերի բարդության մակարդակը հաշվարկվում է փաստական և իրավական բարդության չափանիշների գործակիցների գումարման միջոցով: Գործն ըստ բարդության մակարդակի լինում է՝

ա/ պարզ – 1,25-2 գործակցի դեպքում,
բ/ միջին բարդության – 2-4 գործակցի դեպքում,
գ/ բարդ – 4-10 գործակցի դեպքում,
դ/ առանձնակի բարդ – 10 և ավելի գործակցի դեպքում:

Քրեական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության պարզ մակարդակ ունեցող դատական գործերի՝
90 տոկոսը ենթակա է քննության 3 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 4 ամսվա ընթացքում:

Քրեական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության միջին մակարդակ ունեցող դատական գործերի՝
90 տոկոսը ենթակա է քննության 6 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 8 ամսվա ընթացքում:

Քրեական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝

70 տոկոսը ենթակա է քննության 9 ամսվա ընթացքում,
90 տոկոսը ենթակա է քննության 10 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 12 ամսվա ընթացքում:

Քրեական իրավահարաբերությունների վերաբերյալ բարդության առանձնակի բարդ մակարդակ ունեցող դատական գործերի՝

70 տոկոսը ենթակա է քննության 12 ամսվա ընթացքում,
90 տոկոսը ենթակա է քննության 18 ամսվա ընթացքում,
100 տոկոսը ենթակա է քննության 24 ամսվա ընթացքում:

Քրեական գործերի բարդության մակարդակը հաշվարկվում է փաստական և իրավական բարդության չափանիշների գործակիցների գումարման միջոցով: Գործն ըստ բարդության մակարդակի լինում է՝

ա/ պարզ – 1,25-2 գործակցի դեպքում,
բ/ միջին բարդության – 2-4 գործակցի դեպքում,
գ/ բարդ – 4-10 գործակցի դեպքում,
դ/ առանձնակի բարդ – 10 և ավելի գործակցի դեպքում:

ԳԼՈՒԽ II. ՄԻՋԱՆԿՅԱԼ (ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՉԼՈՒԾՈՂ) ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԵՎ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔՆԵՐԻ (ԳՈՐԾԵՐԻ) ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ քրեական գործերով միջանկյալ (գործն ըստ էության չլուծող) դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները ենթակա են քննության եռամսյա ժամկետում:

2. Վերաքննիչ քրեական դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները ենթակա են քննության եռամսյա ժամկետում:

3. Վերաքննիչ վարչական դատարանի՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները ենթակա են քննության եռամսյա ժամկետում:

ԳԼՈՒԽ III. ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

1. Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված գործերը որակվում են առանձնակի բարդության գործեր, ինչն իրավական առումով պայմանավորված է՝

ա. գործի լուծմամբ պայմանավորված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման պահանջով,

բ. գործի լուծման արդյունքում մարդու իրավունքների հիմնարար խախտման վերացման արդյունքում արդարադատության բուն էության խաթարման վերացման պահանջով,

գ. իրավունքի զարգացման պահանջով:

2. Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունվող գործերի քննության փաստական բարդությունը պայմանավորված է՝

ա. ստորադաս դատարաններում հիմք ծառայած փաստական բարդություններով,

բ. գործի քննության և դատական ակտի կայացման բարդեցված ընթացակարգով:

3. ՀՀ վճռաբեկ դատարանում դատական քննության ուղենիշային ժամկետը 15 ամիս է: